«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի 29.05.2017 թ. թիվ 358 Լ/Կ հրամանի

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 4 25.05.2017թ.

Վանաձոր

2017թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգով սահմանվում է Համալսարանի ամբիոնի վարիչի (այսուհետ՝ Ամբիոնի վարիչ) պաշտոնի թեկնածուների առաջադրման, ընտրությունների անցկացման և Ամբիոնի վարիչին պաշտոնում հրամանագրման կարգը:

2. Սույն կանոնակարգի ընդունման իրավական հիմքերն են ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, «Իրավական ակտերի մասին», «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, Համալսարանի կանոնադրությունը և ներքին իրավական ակտերը:

3. Ամբիոնի գործունեությունն իր իրավասության սահմաններում կազմակերպում և ղեկավարում է ամբիոնի վարիչը, որն ընտրվում է մինչև 5 տարի ժամկետով:

4. Ամբիոնի վարիչն ընտրվում է Համալսարանի գիտական խորհրդի (այսուհետ՝ Գիտխորհուրդ) նիստում:

5. Ամբիոնի վարիչի գործունեությունը համարվում է գիտամանկավարժական աշխատանք:

II. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ, ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթի վերաբերյալ հայտարարությունն ընտրությունից առնվազն 60 օր առաջ տպագրվում է հանրապետական պարբերական մամուլում և հրապարակվում Համալսարանի ինտերնետային կայքէջում:

7. Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները, փաստաթղթերի ներկայացման վայրն ու վերջնաժամկետը:

8. Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին կարող է մասնակցել այն պրոֆեսորը կամ դոցենտը, որն ունի գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան:

9. Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդները աշխատանքային գործունեության նախորդ 10 տարում պետք է ունենան առնվազն 5 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ:

10. Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում Համալսարանի ընդհանուր բաժին են ներկայացնում դիմում (Հավելված 1), կադրերի հաշվառման անհատական թերթիկ, ինքնակենսագրություն, գիտական աստիճանը և/կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները, տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը, ամբիոնի առաջիկա հնգամյա գործունեության ծրագիրը:

11. Ամբիոնի վարիչի պաշտոնն ընտրովի է, և պաշտոնի տեղակալումն իրականացվում է մրցութային ընտրության միջոցով՝ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական

համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կանոնակարգի» 14-րդ, 20-րդ, 21-րդ, 24-32-րդ, 35-60-րդ կետերում սահմանված կանոններին ու նույն կանոնակարգի թիվ թիվ 2, 3, 4 հավելվածներում սահմանված օրինակելի ձևերին համապատասխան:

12. Գիտխորհրդի նիստին ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդի ներկայությունը պարտադիր է: Նա ներկայացնում է ամբիոնի առաջիկա գործունեության ծրագիրը (մինչև հինգ րոպե տևողությամբ) կամ կարող է ինքնաբացարկ հայտնել:

13. Յուրաքանչյուր պաշտոնի հավակնորդի ելույթից հետո, նախագահողի առաջարկությամբ, Գիտխորհրդի անդամները և հրավիրված անձինք կարող են հարցեր տալ: Հարցերը սահմանափակվում են նախագահողի կամ Գիտխորհրդի անդամ(ներ)ի առաջարկով, Գիտխորհրդի որոշմամբ:

14. Պաշտոնի հավակնորդների ծրագրային ելույթներից հետո սկսվում է թեկնածությունների քննարկումը:

15. Քննարկման ժամանակ ելույթների տևողությունն է մինչև երեք րոպե: Անհրաժեշտության դեպքում Գիտխորհուրդը կարող է ավելացնել ելույթ ունեցողին հատկացված ժամանակը:

16. Ամբիոնի վարիչի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Համալսարանի ռեկտորը սահմանված կարգով նշանակում է ամբիոնի վարիչի նոր ընտրություններ:

17. Առանձնահատուկ դեպքերում (նոր ստեղծվող ամբիոն, ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածության բացակայություն, ընտրության չկայացում կամ անվավեր ճանաչում, ինչպես նաև բացառիկ այլ դեպքերում) Համալսարանի ռեկտորն իրավասու է մինչև 1 տարի ժամկետով ամբիոնի վարիչի պաշտոնում հրամանագրել սույն կանոնակարգի 9-րդ կետում սահմանված պահանջները բավարարող անձի և այդ ժամկետի ավարտին կազմակերպել ամբիոնի վարիչի ընտրություններ:

III. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են այն ուժի մեջ մտնելուց հետո ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարվող մրցույթների վրա:

19. Սույն կանոնակարգի ընդունումից առաջ մրցութային ընտրությամբ ընտրված ամբիոնի վարիչները շարունակում են պաշտոնավարել մինչև սահմանված ժամկետի ավարտը:

20. Սույն կանոնակարգի ընդունման պահից ուժը կորցրած ճանաչել 25.09.2014թ գիտական խորհրդում ընդունված «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ-ի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը:

Հավելված 1

Օրինակելի ձև

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական

համալսարան» հիմնադրամի ռեկտոր,

պարոն _____ ին

_____

(անունը, ազգանունը)

_____

_____

(հասցեն, հեռախոսը)

Դիմում

Խնդրում եմ ինձ թույլատրել մասնակցելու 201_ թ. _____-ի _____-ին ՎՊՀ _____ ֆակուլտետի _____ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում տեղակալման համար հայտարարված մրցույթին:

Դիմումին կցում եմ հետևյալ փաստաթղթերը.

1. Կադրերի հաշվառման անձնական թերթիկը,
2. Ինքնակենսագրություն,
3. Գիտական աստիճանի դիպլոմի, գիտական կոչման վկայականի պատճենները,
4. Տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակ,
5. Ամբիոնի առաջիկա հնգամյա գործունեության ծրագիրը:

Դիմող՝ _____ _____ 201 ___ թ.

(ստորագրություն)

(Ծանոթություն՝ Համալսարանում աշխատող պաշտոնի հավակնորդը չի ներկայացնում կ.կ. 2, 3- ում նշված փաստաթղթերը, իսկ կ.կ. 4- ում նշված փաստաթղթում ցույց է տալիս միայն նախորդ մրցույթից հետո տպագրված աշխատանքները):